ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/39

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.02.2019թ. թիվ 26-3/2291-19 գրությամբ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ին (այսուհետ՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրության հիման վրա, 15.02.2019թ. Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱԾԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 8-րդ չափաբաժնի մասով Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով առաջին տեղ զբաղեցնող մասնակցին համակարգի միջոցով ծանուցվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Սահմանված ժամկետում Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն 26.02.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն (այսուհետ նաև՝ Ա/Ձ) մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ծանուցվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրվել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների կողմից որակավորումը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են էլեկտրոնային աճուրդի հրավերի պահանջներին, բացառությամբ՝ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի, որորակավորումը հավաստող փաստաթղթերը ընդհանրապես չի ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև՝ Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.01.2019թ. ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրվել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների կողմից որակավորումը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են էլեկտրոնյաին աճուրդի հրավերի պահանջներին, բացառությամբ՝ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը 8-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու մասին ծանուցումը ներկայացվել է 11.01.2019թ., այսինքն այն ժամանակահատվածում, երբ «eauction.armeps.am» համակարգը խափանված է եղել (ըստ պաշտոնական տեղեկագրում հրապարակված տեղեկատվության՝ համակարգը խափանված է եղել 2019թ. հունվարի 11.01.2019թ.-14.01.2019թ., իսկ այնուհետև՝ մինչև 18.01.2019թ.):

11.01.2019թ. ստանալով համապատասխան ծանուցումը՝ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն փորձել է բեռնել և ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն «eauction.armeps.am» համակարգը խափանված լինելու հետևանքով անհնար է եղել ընդհանրապես բեռնել փաստաթղթեր:

Վերոգրյալի հետ կապված՝ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն, որով հայտնել է հետևյալը.

«Ինչպես հայտնի է, 2019թ. հունվարի 11-ից 14-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների համակարգում առկա են եղել խափանումներ: Հայտնում ենք, որ Ա/Ձ Անահիտ Անտոնյանը հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Ընթացակարգի որակավորման փաստաթղթերի ներկայացման փուլում (փաստաթղթերի պահանջը ներկայացվել է 11.01.2019թ.) «eauction.armeps.am» համակարգը խափանված է եղել, որի պատճառով նույն օրը, այն է՝ 11.01.2019թ. Ա/Ձ Անահիտ Անտոնյանը չի կարողացել բեռնել անհրաժեշտ փաստաթղթերը: Ելնելով վերոգրյալից խնդրում եմ հայտնել. արդյոք կարող էր «eauction.armeps.am» կայքի խափանումը պատճառ հանդիսանար, որպեսզի Ա/Ձ Անահիտ Անտոնյանը չկարողանար բեռնել որակավորման փաստաթղթերը:»:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ս.թ. փետրվարի 8-ի թիվ 01.1/26-1/1893-19 գրությամբ ստացվել է պատասխան, որում մասնավորապես ասվում է՝

«Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ 08.01.2019թ. տեղեկատվություն է հրապարակվել armeps.am և eauction.armeps.am համակարգերի համապատասխան հարթակներում՝ տեղեկացնելով, որ հունվարի 11-ին ժամը 18:00-ից մինչև հունվարի 14-ին ժամը 09:00-ն ընկած ժամանակահատվածում ինչպես մրցույթների, այնպես էլ աճուրդների համակարգերը չեն գործելու, և նշված տեղեկատվությունը հասանելի էր նաև պատվիրատուներին, ուստի գտնում ենք, որ վերոհիշյալ ընթացակարգի շրջանակներում կազմակերպություններին պետք է հնարավորություն տրվի հրավերով սահմանված ժամկետում իրականացնել փաստաթղթերի շտկում:»:

Միևնույն ժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, այն է ս.թ. հունվարի 25-ին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստանալով շտկման պահանջ՝ սահմանված ժամկետում Ընկերությունը կրկին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը թե՛ «eauction.armeps.am» համակարգի, թե՛ էլ. փոստի միջոցով:

Սակայն ս.թ. հունվարի 31-ին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ստացվել է նամակ, որով Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը 8-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն իրականացրել է հնարավոր բոլոր քայլերը՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելու համար և քանի որ աճուրդային համակարգը ս.թ. հունվարի 11.01.2019թ.-14.01.2019թ. խափանված է եղել, որը հավաստում է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը, հետևաբար անհնար է եղել ուղարկել փաստաթղթերը, այդ իսկ պատճառով այն ուղարկվել է Պատվիրատուի շտկման պահանջ ստանալու փուլում (այն ժամանակ, երբ էլեկտրոնային համակարգը սկսել է աշխատել) և էլեկտրոնային համակարգի (այն ժամանակ, երբ էլեկտրոնային համակարգը սկսել է աշխատել) և էլ. հասցեի միջոցով:

Հարգելի պարոն Սարգսյան, խնդրում ենք Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ հաշվի առնել, որ իրականում Մասնակիցը ձեռնարկել է բոլոր միջոցները՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին սահմանված ժամկետում ներկայացնելու համար, սակայն eauction.armeps.am» համակարգի խափանված լինելու պատճառով այդ փաստաթղթերը հնարավոր չի եղել ուղարկել աճուրդի միջոցով:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/29 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2019թ. թիվ 26-3/2291-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության

08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 26.12.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 և 23.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից 26.02.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշումը, Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը,.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ հացաթխման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն:

Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում են առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 26.12.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության.

- 4.1 կետով որոշել է Աճուրդի 8-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Անահիտ Անտոնյան Ա/Ձ--ին:

- 4.2 կետով որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովը 26.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից

որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել և որոշել է Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի ներկայացուցիչը հայտնեց, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին ծանուցումը Ընկերությանը ներկայացվել է 11.01.2019թ., այն ժամանակահատվածում, երբ «eauction.armeps.am» համակարգը, համաձայն պաշտոնական տեղեկագրում հրապարակված տեղեկատվությաան խափանված է եղել, այդ իսկ պատճառով անհնար է եղել նույն օրը «eauction.armeps.am» համակարգի միջոցով ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ առաջացած խնդրի վերաբերյալ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսերի նախարարությանը, որի վերաբերյալ ստացվել է պատասխան առ այն, որ համակարգի խափանված լինելու պատճառով, պատվիրատուների կողմից կազմակերպություններին պետք է հնարավորություն տրվի հրավերով սահմանված ժամկետում իրականացնել փաստաթղթերի շտկում: Ընկերությունը 26.01.2019թ. ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը թե՛ «eauction.armeps.am» համակարգի, թե՛ էլեկտրոնային փոստի միջոցով:

Միաժամանակ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 26.01.2019թ. Պատվիրատուի g.teryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղղարկված նամակի կարճապատկերումը (screenshot):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն

ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 6-րդ հոդվածի՝ 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ հացաթխման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

• 7.10 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել՝

ա. առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները նույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)

դ. նույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Պաշտոնական տեղեկագրում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ «eauction.armeps.am» համակարգը 11.01.2019թ.- 14.01.2019թ. խափանված է եղել:

- Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ն 25.01.2019թ. Պատվիրատուի կողմից ստացել է որակավորման փաստաթղթերը շտկելու պահանջ և 26.01.2019թ. որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի քարտուղարի՝ g.teryan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու միտում, քանի որ վերջինս Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.10 կետի 3-րդ ենթակետով սահմանված պարտավորությունները կատարելու նպատակով ձեռնարկել է արձանագրված հնարավոր միջոցները և պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում ուղարկել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում նշված՝ g.teryan@mil.am էլ. փոստի հասցեին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2019թ. թիվ 26-3/2291-19 գրությամբ Անահիտ Անտոնյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ